



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Հունվար*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հունվար ամսին հանրապետության զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով:



Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում +16...+18°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +8...+10°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +13...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+16°C, Շիրակում՝ +5...+8°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +6...+7°C, նախալեռնային շրջաններում՝ +8...+9°C, Գեղարքունիքում՝ +6...+10°C, Լոռիում՝ +13...+16°C, Արմավիրում՝ +8...+10°C, Արարատում՝ +8...+10°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +5...+7°C, նախալեռններում՝ +8...+10°C:

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում -6...-7°C (Դիլիջան՝ -12°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -16...-18°C, նախալեռնային շրջաններում՝ -7...-9°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ -4...-6°C, նախալեռնային շրջաններում՝ -12...-14°C (Սիսիան՝ 19°C), Շիրակում՝ -12...-17°C (Աշոցք՝ -22°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -14...-18°C, նախալեռնային շրջաններում՝ -8...-10°C, Գեղարքունիքում՝ -13...-18°C, Լոռիում՝ -15...-19°C (Օձուն՝ -11°C), Արմավիրում՝ -10...-12°C, Արարատում՝ -8...-11°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -17...-19°C, նախալեռններում՝ -7...-11°C:


### Տասնօրյակային տեղումներ




Անսպա ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 6-7մմ (17-27%), Լոռիում՝ 2-6մմ (10-25%), Տավուշում՝ 3-7մմ (13-33%), Արագածոտնում՝ 6-8մմ (18-42%), Գեղարքունիքում՝ 1-4մմ (5-21%), Մասրիկում՝ 25մմ (126%), Կոտայքում՝ 6-10մմ (13-31%), Արմավիրում՝ 5-7մմ (27-31%), Արարատում՝ 4-7մմ, (23-30%), Վայոց ձորում՝ 4-14մմ, (12-20%), Սյունիքում՝ 4-10մմ (23-35%):

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է երրորդ տասնօրյակում, հանրապետության լեռնային շրջաններում՝ -18...-23°C (Աշոցքում՝ -26°C), Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում, Լոռիում՝ -13...-17°C, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -9...-10°C:

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հունվարի 31-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմել է 37սմ, Ամբերդում՝ 15սմ, Մասրիկում՝ 16սմ, Հրազդանում, Եղվարդում, Անանուն լ/ք-ում՝ 5սմ, Գյումրիում, Արթիկում, Աշոցքում, Սիսիանում՝ 3-4սմ, Ֆանտանում, Ապարանում, Ուրցաձորում, Աշտարակում, Արմավիրում, Մերձավանում՝ 1-2սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:



### Աշնանացան ցորենի ձմեռման պայմանները

Ամսվա ընթացքում աշնանացան ցորենը ամենուրեք գտնվել է ձմեռային հանգստի շրջանում: Եղանակային պայմանները նպաստավոր չեն եղել աշնանացանի ձմեռման համար:

Հողի մակերևույթին դիտված բացասական ջերմաստիճանները, ձյունածածկույթի անբավարար լինելը կամ բացակայությունը վրանգավոր էին աշնանացանի համար:

Մերձավանում առաջին և երրորդ փասնօրյակներում աշնանացանի թփակալման հանգույցում (հողի 3սմ շերտում) նվազագույն ջերմաստիճանը գրացվել է  $-9^{\circ}\text{C}$ , սակայն այն վրանգավոր չէր, քանի որ մշակաբույսը գտնվել է թփակալման փուլում:

Հունվարի 31-ի դրությամբ հովտային շրջաններում հողը սառած էր 18-22սմ, լեռնային շրջաններում՝ 63-75սմ խորությամբ: